ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
SPECIAL TOPIC: YHWH'S ETERNAL REDEMPTIVE PLAN

Ընթերցողներիդ պետք է խոստովանեմ, որ այս հարցում ես կողմնակալ եմ: Իմ համակարգված աստվածաբանությունը Կալվինիզմը կամ անջատողականությունը չէ, այլ Մեծ Պատվիրանը ավետարանելը (տես՝ Մատթ. 28:18-20, Ղուկ. 24:46-47, Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված ամբողջ մարդկության համար փրկագործության ծրագիր ունի (օր.՝ Ծնն. 3:15, 12:3, Ելից 19:5-6, Երեմ. 31:31-34, Եզեկիել 18, 36:22-39, Գործք 2:23, 3:18, 4:28, 13:29, Հռոմ. 3:9-18,19-20,21-31), բոլոր նրանց համար, ովքեր ստեղծված են Նրա պատկերով և նմանությամբ (տես՝ Ծնն. 1:26-27): Ուխտերը Քրիստոսում միավորված են (տես՝ Գաղ. 3:28-29, Կող. 3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է՝ առեղծվածը, որ թաքնված էր, սակայն այժմ հայտնված (տես՝ Եփես. 2:11-3:13): Սուրբ Գրքի բանալին հանդիսանում է ՆԿ-յան ավետարանը, և ոչ թե Իսրայելը:

Նախնական այս հասկացությունները իմաստավորում են Սուրբ Գրքի իմ բոլոր մեկնաբանությունները: Բոլոր տեքստերը ես կարդում եմ այդ լույսի ներքո: Իհարկե դա կողմնակալություն՝ հակվածություն է (բոլոր մեկնաբաններն էլ դա ունեն), սակայն դա Սուրբ Գրքի միջոցով ինֆորմացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2 կենտրոնացումը հանդիսանում է ՅԱՀՎԵի կողմից մի վայրի արարումը, որտեղ Նա և Իր մեծագույն արարչագործությունը՝ մարդը, կարող են հաղորդակցվել (տես՝ Ծնն. 1:26,27, 3:8): Ֆիզիկական արարչագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Սբ. Օգոստինոսը այն բնութագրում է որպես Աստծո կողմից յուրաքանչյուր մարդու մեջ դրած դատարկություն՝ խոռոչ, որը միայն հենց Աստված Ինքը կարող է լցնել:
2. Ս. Ս. Լյուիսը այս մոլորակը կոչում է «ձեռք տրված մոլորակ» (այսինքն՝ մարդկության համար Աստծո կողմից պատրաստված):

ՀԿ-ը ունի շատ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵԻ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդ՝ Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ուշադրություն դարձրեք Ծնն. 12: 3:
3. Ելից 20-ում (2 Օրինաց 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի առաջնորդի Իր ընտրյալ ժողովրդին: Նկատեք, որ Ելից 19:5-6-ում ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա բացառիկ փոխհարաբերություն Իսրայելի հետ: Ինչպես նաև նկատեք, որ նրանք ընտրված էին, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է ՅԱՀՎԵԻՆ ճանաչելու և Նրան հաճեցնելու համար ազգերի համար մեխանիզմ լինի: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):
4. Սաղմոսներում՝ 22:27-28, 66:4, 86: 9 (Հայտ. 15:4)
5. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել տիեզերական փրկագործության Իր ծրագրերը:
   ա. Եսայի 2: 2-4, 12: 4-5, 25:6-9, 42:6,10-12, 45:22, 49:5-6, 51:4-5, 56:6-8, 60:1-3, 66:18,23
   բ. Երեմիա - 3:17, 4:2, 16:19
   գ. Միքիա 4:1-3
   դ. Մաղաքիա 1:11

Տիեզերական այս շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36), (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ</u>), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ ողորմության վրա, (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ /ՀԿ/ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ</u>), այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ</u>):

Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր հոգի»: Հնազանդությունը կարևոր է, սակայն դա ներքին օրենք է, և ոչ միայն արտաքին (տես Հռոմ. 3: 21-31, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ):

ՆԿ-ը հստակ ամրապնդում է տիեզերական փրկագործության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանի՝ Մատթ.28:18-20, Ղուկ.24:46-47, Գործք 1:8
2. Աստծո հավիտենական ծրագրի (այսինքն՝ նախասահմանության)՝ Ղուկ.22:22, Գործք 2:23, 3:18, 4:28, 13:29
3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն՝ Հովհ.3:16, 4:42, Գործք 10:34-35, 1 Տիմ.2: 4-6, Տիտոս 2:11, 2 Պետ.3: 9, 1 Հովհ.2: 2, 4:14
4. Քրիստոսը միավորում է ՀԿ և ՆԿ՝ Գաղ. 3: 28-29, Եփ. 2:11-3:13, Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված էր, բայց հիմա հայտնված է (Եփ.2:11-3:13):

ՆԿ-ը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կարևորը և ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը՝ վերջինը (տես՝ Մատթ. 5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու՝

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈՒ՞ ԵՆ ՀԿ-ՅԱՆ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԱՅԴՔԱՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՆԿ-ՅԱՆ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏՔ, ՀԱՎԱՏԱԼ ԿԱՄ ՎՍՏԱՀԵԼ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԸՆԴՈՒՆԵԼ», «ՀԱՎԱՏԱԼ», «ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, ԴԱՎԱՆԵԼ», «ԿԱՆՉԵԼ»